Պ-675[17]-09.10.2023-ՊԱ-011/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 334 ~~հոդվածը՝~~ հոդվածում «քաղաքացիական ողորկափող հրազեն,» բառերը և կետադրական նշանը և «օդաճնշիչ,» բառը և կետադրական նշանը հանել:

~~1) վերնագիրը և 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«**Հոդված 334.** **Գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը**~~

~~1. Ապօրինի կերպով գազային, ազդանշանային, սառը կամ նետողական զենք ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ կրելը՝~~

~~պատժվում է տուգանքով՝ առավելագույնը հարյուրհիսունապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:».~~

~~2) 2-րդ մասը «տասնապատիկից երեսնապատիկի» բառերը փոխարինել «հարյուրհիսունապատից երեքհարյուրապատիկի» բառերով, «հարյուրից երկու հարյուր» բառերը փոխարինել «երկու հարյուր յոթանասուն» բառերով:~~

Հոդված 2. Օրենսգրքի 335 հոդվածում՝

1) վերնագրում «մասերի» բառից հետո լրացնել «օդաճնշիչ զենքի, սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազենի» բառերը.

2) 1-ին մասը «(բացառությամբ քաղաքացիական ողորկափող հրազենի, դրա փամփուշտների կամ դրա բաղկացուցիչ մասերի)» բառերը հանել, «մաս» բառից հետո լրացնել «օդաճնշիչ զենք, սահմանափակ խոցելիությամբ (վնասվածքային) հրազեն և դրա փամփուշտներ» բառերը.

~~**Հոդված 3.** Օրենսգրքի 336 հոդվածի վերնագրում, 1-ին մասում «հրազեն, դրա» բառերը փոխարինել «զենք, հրազենի» բառերով.~~

~~**Հոդված 4.** Օրենսգրքի 337 հոդվածում՝~~

~~1) վերնագրում հանել «հրազենի» բառը.~~

~~2) 1-ին մասը «հրազենի» բառը փոխարինել «զենքի» բառով:~~

~~**Հոդված 5.** Օրենսգրքի 338 հոդվածի վերնագրում, 1-ին մասում «հրազեն, դրա» բառերը փոխարինել «զենք, հրազենի» բառերով:~~

~~**Հոդված 6.** Օրենսգրքի 339 հոդվածի վերնագրում, 1-ին մասում «հրազեն, դրա» բառերը փոխարինել «զենք, հրազենի» բառերով:~~

~~**Հոդված 7. Օ**րենսգրքի 340 հոդվածում՝~~

~~1) վերնագրում «հրազենի» բառը փոխարինել «զենքի» բառով.~~

~~2) 1-ին մասը «հրազենի կամ դրա բաղկացուցիչ մասի» բառերը փոխարինել «զենքի, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասերի» բառերով:~~

Հոդված ~~8~~ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակմանը հաջորդող օրվանից:~~ հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: